Արձանագրություն N 3
«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/94» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստ

ք. Երևան

20.03.2020թ.
Ժամը՝ 15:30

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Դ. Բալասանյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Ն. Մուկուչյան /գնահատող/, Է. Ղազարյան /գնահատող/, Մ. Ջալաթյան /բացող/, Մ. Շահինյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/94» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում անցկացվող բանակցությունների մասին

(Դ. Բալասանյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/94» ծածկագրով գնման ընթացակարգի ոչ գնային պայմանները բավարարող գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցները հրավիրվել էին գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների: <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> ՀՀ կառավարության 526-Ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն գների նվազեցման շուրջ անցկացվող միաժամանակյա բանակցություններին ծանուցված մասնակիցներից մասնակցել է ԱՏԼԱՆՏ ԷՔՍՏՐԱ ՍՊԸ-ն՝ 2-րդ չափաբաժնի մասով, և ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ-ն՝ 5-րդ չափաբաժնի մասով: Մասնակիցներն իրենց վերջնական գնային առաջարկները ներկայացրել են էլեկտրոնային փոս/տի միջոցով:

1.2 ԱՏԼԱՆՏ ԷՔՍՏՐԱ ՍՊԸ-ն իր գնային առաջարկը նվազեցրեց 100 /մեկ հարյուր/ ՀՀ դրամով՝ կազմելով 77900 /յոթանասունյոթ հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ: ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ-ն իր գնային առաջարկը նվազեցրեց 792/յոթ հարյուր իննսուներկու/ դրամով, կազմելով՝ 180000 /մեկ հարյուր ութսուն հազար / ՀՀ դրամ:

2. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/94» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Դ. Բալասանյան)

Հանձնաժողովը որոշեց հաստատել գնանշման հարցում գնման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքները.

Մասնակցի անվանումը	Հայտի գնահատականը
ԱՌԿՏՈՒՐ ՍՊԸ	Բավարար
ԱՏԼԱՆՏ ԷՔՍՏՐԱ ՍՊԸ	Բավարար
ԱՐՄ-ՇԻՆ ՍՊԸ	Բավարար
Արգավանդ Կահույք ՍՊԸ	Բավարար
ՍՏԱՐՄԱԼԵ ՍՊԸ	Բավարար

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

3. «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/94» ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակցի որոշման մասին

(Դ. Բալասանյան)

3.1 Գնահատող հանձնաժողովի որոշմամբ «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-20/94» ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին և 2-րդ** չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչել **«ԱՏԼԱՆՏ ԷՔՍՏՐԱ» ՍՊԸ**-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, **3-րդ** չափաբաժնի մասով մասով ընտրված մասնակից ճանաչել **«Արգավանդ Կահույք» ՍՊԸ**-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, **4-րդ** չափաբաժնի մասով մասով ընտրված մասնակից ճանաչել **«ԱՐՄ-ՇԻՆ» ՍՊԸ**-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, իսկ **5-րդ** չափաբաժնի մասով մասով ընտրված մասնակից ճանաչել **«ՍՏԱՐՄԱԼԵ» ՍՊԸ**-ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

4. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Դ. Բալասանյան)

4.1 Հիմք ընդունելով սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը՝
Երևանի քաղաքապետարանի կարիքների համար **գրասենյակային գույքի** ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել վերը նշված մասնակիցներին:

4.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետը հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և սահմանել անգործության ժամկետ հինգ օրացուցային օր:

4.3 Անգործության ավարտից հետո ընտրված մասնակիցներին ներկայացնել պայմանագրերի նախագծերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի Նախագահ՝	.....	Դ. Բալասանյան
	.....	Ն. Մուկուչյան
	.....	Է. Ղազարյան
Անդամներ՝	.....	Մ. Ջալաթյան
	.....	Մ. Շահինյան
Համակարգող՝	.....	Ս. Եղիազարյան